Լաբորատոր աշխատանք

ՋՐԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԻ ԴԻՏՈՒՄԸ ՓԱԿ ԱՆՈԹՈՒՄ

Փորձ 1. Անձրևի առաջացումը

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ. 25–30 սմ բարձրությամբ ապակե գլանաձև անոթ, եռոտանի,սպիրտայրոց, փոքր քանակությամբ բժշկական սպիրտ, անոթի տրամագծից մի փոքր մեծ ապակե ափսե, սառույց:

Փորձի նկարագրությունը. Անոթը նախապես տաքացնել (թեյնիկի տաք ջրով), այնուհետև դնել եռոտանու վրա, լցնել տաք ջուր և ավելացնել բժշկական սպիրտը (այն անհրաժեշտ է երևույթն ավելի արագ և պատկերավոր դարձնելու համար) և վառել սպիրտայրոցը: Երբ ջուրը կսկսի եռալ անոթը վերևից ծածկել սառույցով լի ափսեյով: Ափսեյի տակ սկզբում կձևավորվի ամպանման գոլորշու կուտակում, որից մի քանի րոպե անց կսկսեն թափվել ջրի մանր կաթիլներ: Փորձը պատկերավոր ցույց է տալիս Երկրի վրա ջրի փոքր շրջապտույտը:



Ջրի շրջապտույտի դիտումը փակ անոթում: